Հավելված

ՀՀ կառավարության 2010թվականի
նոյեմբերի 4 -ի N 1496 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎՃԱՐՈՎԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն) վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է լրացուցիչ կրթության կազմակերպական հիմքը, կարգավորում է լրացուցիչ կրթության, ինչպես նաև այլ ծառայությունների մասնակից կողմերի ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները:

2. Վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթությունը նպատակաուղղված է հանրակրթական հիմնական ծրագրերից դուրս՝ կամավորության սկզբունքով, սովորողների, քաղաքացիների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, մարդասիրական, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը:

3. Տարրական, միջին, հիմնական, միջնակարգ հաստատություններում և վարժարաններում (1-9-րդ դասարանցիների մասնակցությամբ) վճարովի հիմունքներով լրացուցիչ

կրթություն կարող է իրականացվել միայն ուսումնական պլանով տվյալ դասարանի առարկայացանկում չընդգրկված առարկաներից:

4. Հաստատությունը կարող է իրականացնել վճարովի այլ ծառայություններ՝ մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումներ, սովորողների առողջության պահպանման միջոցառումներ, սովորողների սննդի կազմակերպում, սովորողների երկարօրյա ուսուցման և (կամ) գիշերակացի և ամառային հանգստի կազմակերպում, ուսումնաարտադրական գործառնության ծավալում և արտադրանքի իրացում:

5. Լրացուցիչ կրթության մասնակիցներն են՝ հաստատությունը, կրթական ծառայություններ իրականացնողները, լրացուցիչ կրթություն ստացողները և նրանց օրինական ներկայացուցիչները:

6. Լրացուցիչ կրթությունն իրականացվում է երկկողմ համաձայնությամբ՝ հաստատության և ծնողի, օրինական ներկայացուցչի, կազմակերպության (այսուհետ՝ պատվիրատու) միջև երկու հավասարազոր օրինակից կնքվող պայմանագրի հիման վրա, որի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

7. Վճարովի լրացուցիչ կրթական ծառայության իրականացումից հետո պատվիրատուին կարող է տրվել կատարողի կողմից հաստատված և կնքված՝ մասնագիտական որակավորում չպարունակող փաստաթուղթ:

II. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ

8. Հաստատությունը պարտավոր է լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ համապատասխան լիազոր մարմնի միջոցով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ներկայացնել հետևյալ տեղեկությունները՝

1) հաստատության կողմից լրացուցիչ կրթական ծառայություն իրականացնելու հիմքերը.

2) լրացուցիչ կրթական ծրագրերը.

3) ժամերի քանակը.

4) ուսուցման տևողությունը.

5) դասավանդող մասնագետի որակավորումը.

6) իրականացվող լրացուցիչ ծրագրերի վճարի չափը։

III. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

9. Լրացուցիչ կրթական ծառայություններն իրականացվում են ինչպես հաստատության, այնպես էլ հրավիրված մասնագետների և (կամ) մանկավարժների միջոցով։

10. Լրացուցիչ կրթական ծառայություններ իրականացնող մասնագետի համապատասխան մասնագիտական որակավորումը պարտադիր է։

11. Լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացման ընթացքում կատարողը պարտավոր է ապահովել մասնակիցների անվտանգությունը և սանիտարահիգիենիկ պայմանները։ Սպորտային խմբակների դեպքում բժշկի ներկայությունը պարտադիր է։

12. Հաստատության տնօրենը հաստատում է լրացուցիչ կրթական ծառայության՝

1) ուսումնական պլանը.

2) ուսումնական ծրագիրը.

3) դասացուցակը.

4) դասամատյանը։

13. Հաստատության կառավարման խորհրդի որոշմամբ՝ տնօրենի հրամանով հաստատվում է լրացուցիչ կրթական ծառայության՝

1) վարձավճարի չափը.

2) կրթական ծառայություններ իրականացնողների վճարի չափը.

3) միջոցների բաշխման համամասնությունները։

14. Լրացուցիչ կրթական ծառայությունների համար վճարումները կատարում է պատ-վիրատուն՝ կանխիկ կամ բանկային փոխանցման միջոցով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ